**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 16.05.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «    » նոյեմբեր 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Լեվել-Էս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 16.05.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված 5000 քմ. ուղղահայաց շերտավարագույրներից 589.1 քմ. ուղղահայաց շերտավարագույրների մասով 2 073 580 (երկու միլիոն յոթանասուներեք հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված 75.1 քմ ուղղահայաց շերտավարագույրները 35.24 քմ. հորիզոնական շերտավարագույրներով փոխարինելու անհրաժեշտությունը Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ Հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հավելված 1-ի:

1.2. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հավելված 2-ի:

1.3. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի Հավելված 3-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են N 2 Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Լեվել-Էս» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ Երևան, Դավիթ-Բեկի 106/7 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00430324 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2140004535940100 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Ս. Պետրոսյան |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

Հավելված N 1
«        » «        » 2022թ. կնքված N 2 համաձայնագրի
(Հավելված N 1
« 16 » մայիսի 2022 թ. Կնքված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» ծածկագրով պայմանագրի)

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Ապրանքի | | | |
|---|---|---|---|
| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 39515440/503 | Ուղղահայաց շերտավարագույր | Վերևի քիվը ալյումինե պրոֆիլով է՝ չափսը. լայնություն՝ 4.5սմ x բարձրություն՝ 2.5սմ: Աշխատացնող մեխանիզմները պլաստմասե: Գործվածքը պոլիմերային նյութով տոգորված՝ լայնքը 13սմ: Ներքևի ծանրոցները պլաստմասե,13սմ լայնքով: Ներքևի շղթան և աշխատացնող շղթան պլաստմասե: Գույնը՝ բաց ծիրանագույն: Ուղղահայաց շերտավարագույրներից առնվազն 2500 քմ տեղադրվելում է Երևան քաղաքում: Ուղղահայաց շերտավարագույրները չօգտագործված են: Ուղղահայաց շերտավարագույրների նախօրոք չափագրումը, տեղափոխումը, հնի ապամոնտաժումը (եթե այդպիսիք կան), նորի տեղադրումը (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը) իրականացվում են Վաճառողի կողմից: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելուց հետո քսան օրացուցային օրվա ընթացքում Վաճառողը՝ Գնորդի պահանջով պարտավոր է այցելել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված հասցեներ, կատարել համապատասխան չափագրումներ և արդյունքները ներկայացնել Գնորդի հաստատմանը: Պատվերը համարվում է ձևավորված՝ հաստատված չափագրման արդյունքների մասին Գնորդի կողմից Վաճառողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնելու օրը: |
| 2 | 39515450/1 | Հորիզոնական շերտավարագույր | Հորիզոնական մետաղական շերտավարագույրներ՝ թիթեղների չափերը. հաստությունը՝ 0.18մմ, լայնությունը՝ 25մմ, գույնը՝ երկկողմանի մոխրագույն: Մետաղյա քիվի պատերի հաստությունը՝ 0.8մմ մետաղյա քիվի չափսերը՝ 20մմ և 28մմ: Ալյումինե թիթեղների աշխատանքը կառավարող մեխանիզմ, որը թույլ է տալիս բարձրացնել և իջեցնել շերտավարագույրը, ինչպես նաև պտտել 180° իր առանցքի շուրջ: |

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Լևել-Էս» ՍՊԸ***
Հասցե՝ Երևան, Դավիթ-Բեկի 106/7
ՀՎՀՀ՝ 00430324
Հ/Հ՝ 2140004535940100
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Պետրոսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«  » «  » 2022թ. կնքված N 2 համաձայնագրի
(Հավելված N 2
« 16 » մայիսի 2022 թ. Կնքված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» ծածկագրով պայմանագրի)

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը* |
| 1 | քմ | 3520 | 1809280 | 514 | Երևան քաղաքում և ՀՀ մարզերում տեղակայված ՀՀ դատարանների նստավայրեր, և Դատական դեպարտամենտի վարչակա շենք: | 514 | Պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված՝ 60 օրացուցային օրվա ընթացքում: |
| 2 | քմ | 7500 | 264300 | 35.24 | ք. Երևան, Դատական դեպարտամենտի վարչակա շենք՝ Կորյունի 15/1: | 35.24 | Պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված՝ 60 օրացույցային օրվա ընթացքում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: |

**Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Լեվել-Էս» ՍՊԸ**
Հասցե՝ Երևան, Դավիթ-Բեկի 106/7
ՀՎՀՀ՝ 00430324
Հ/Հ՝ 2140004535940100
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«        » «        » 2022թ. Կնքված N 2 համաձայնագրի
(Հավելված N 3
« 16 » մայիսի 2022 թ. Կնքված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/19-3» ծածկագրով պայմանագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 39515440/503 | Ուղղահայաց շերտավարագույր | 1809280 | 1809280 | **1 809 280** |
| 39515450/1 | Հորիզոնական շերտավարագույր | 264300 | 264300 | **264 300** |
| **Ընդամենը** | | | | **2 073 580** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Լեվել-Էս» ՍՊԸ***
Հասցե՝ Երևան, Դավիթ-Բեկի 106/7
ՀՎՀՀ՝ 00430324
Հ/Հ՝ 2140004535940100
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս. Պետրոսյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ